



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 29 -Ա  
« 17 » ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14, 15 և 16-րդ կետերով.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության 2024 թվականի հունվարի 18-ի ժամը 11:00-ի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Վայոց ձորի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Սուսան Մկրտչյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները դադարեցվում են սահմանված կարգի համաձայն:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature



Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Բ. Եղեգնաձոր**

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**



**ՀՀ Վայոց ձորի մարզպետի  
2024թ հունվարի 17-ի N 28-Ա որոշման**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային  
կազմակերպության գործադիր մարմնի ընտրության 2024 թվականի հունվարի 18-ի  
Ժամը 11:00-ի մրցութային հանձնաժողովի կազմը

**Հանձնաժողովի նախագահ՝**

Արսեն Խաչատրյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ

**Անդամներ՝**

Աղվան Հարությունյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
տարածքային կառավարման և տեղական  
ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Տատյանա Պոլյուխինցինա

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Վահան Աբրահամյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Նարինե Մաղաքյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
իրավաբանական բաժնի պետ

Հոմերոս Ռուստամյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
անձնակազմի կառավարման,  
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության  
հետ կապերի վարչության անձնակազմի  
կառավարման բաժնի պետ